ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի
Որոշում N 1/205L

26/02/2009

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՁԵՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՁԵՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հանրության կողմից կարծիքների ներկայացման հնարավորություն ընձեռելու վերաբերյալ կարգը»՝ (այսուհետև՝ Կարգ)՝ համաձայն Հավելվածի:
2. Հանձնարարել ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների վարչությանը սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրյա ժամկետում՝ ապահովել Կարգի 3-րդ կետով սահմանված դրույթի իրականացումը, փոփոխել Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի «Նախագծեր» բաժինը Կարգի Հավելված 1-ով սահմանված ձևին համապատասխան, ինչպես նաև իրականացնել Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի «Նախագծեր» բաժնի ծրագրային ապահովումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2009 թ. ապրիլի 1-ից:

Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկի նախագահ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԾԵՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը կարգավորում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի նորմատիվ իրավական ակտերի նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) վերաբերյալ հանրության կողմից կարծիքների ներկայացման հնարավորություն ընձեռելու հետ կապված հարաբերությունները:

2.Սույն կարգի դրույթները չեն տարածվում այն Նախագծերի վրա, որոնք օրենքի համաձայն պարունակում են գաղտնի տեղեկություններ:

3. Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի «Նախագծեր» բաժնում Նախագծերի տեղադրման համար սահմանվում է աղյուսակ՝ համաձայն Հավելված 1-ի աղյուսակ 1-ի:

2. ՆԱԽԱԳԾԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ

4. Կենտրոնական բանկի Վարչության նիստում տրված հանձնարարականի համաձայն՝ նախաձեռնող ստորաբաժանումը լրամշակման ենթակա Նախագծերը՝ Վարչության նիստին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է Կենտրոնական բանկի արձանագրային բաժնին (այսուհետ՝ Արձանագրային բաժին):

5. Արձանագրային բաժինը Վարչության նիստին հավանությանը արժանացած Նախագծերը Վարչության նիստին հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, իսկ լրամշակման ենթակա Նախագծերը նախաձեռնող ստորաբաժանման կողմից ստանալու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է Կենտրոնական բանկի Հասարակայնության հետ կապերի ծառայությանը:

6. Արձանագրային բաժնից Նախագծերը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում Հասարակայնության հետ կապերի ծառայությունը դրանք տեղադրում է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի «Նախագծեր» բաժնում՝ պիտակելով այն «ՆՈՐ» բառով:

3. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

7. Նախագծերի տեղադրման օրվանից 14 աշխատանքային օրվա ընթացքում հանրությունը հնարավորություն ունի իր կարծիքն ուղարկել Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի «Նախագծեր» բաժնի աղյուսակ 1-ի «Հետադարձ կապ» սյունակում նշված համապատասխան էլեկտրոնային հասցեներով: Նշված 14-օրյա ժամկետը կարող է փոփոխվել, ելնելով նախագծի միջոցով կատարվող փոփոխությունների հրատապությունից և կարևորությունից, եթե Վարչության նիստում քննարկվող նախագծի վերաբերյալ նման որոշում կայացվի:

8. «Նախագծեր» բաժնի աղյուսակ 1-ում տեղադրված ժամկետի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնող ստորաբաժանումը շահագրգիռ ստորաբաժանումների հետ քննարկում է ներկայացված կարծիքները և ընդունված կարծիքների արդյունքում լրամշակված Նախագծերը ներկայացնում Կենտրոնական բանկի խորհրդի նիստին՝ ամփոփ տեղեկանքում նշելով քննարկումների արդյունքում չընդունված կարծիքները և դրանք չընդունելու հիմնավորումները: Քննարկումների ընթացքում, ելնելով նպատակահարմարությունից, Նախագծի վերաբերյալ կարծիք ներկայացրած անձին կարող է հնարավորություն տրվել մասնակցելու քննարկումներին՝ դրա մասին նրան հայտնելով (էլեկտրոնային փոստի կամ հեռախոսի միջոցով) քննարկումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

4. ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

9. Սույն կարգի 7-րդ կետում նշված՝ կարծիքների ընդունման համար տրամադրված ժամկետի ավարտից հետո Հասարակայնության հետ կապերի ծառայությունը խմբագրում է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի «Նախագծեր» բաժնի աղյուսակ 1-ի բովանդակությունը՝ հանելով տվյալ Նախագծի վրա դրված «ՆՈՐ» պիտակը՝ պասիվացնելով «Հետադարձ կապ» սյունակի համապատասխան էլեկտրոնային հասցեն:

10. Հասարակայնության հետ կապերի ծառայությունը Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի «Նախագծեր» բաժնի աղյուսակ 1-ից հանում է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված Նախագծերը և դրանց վերաբերող այլ տեղեկատվությունը դրանց՝ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:

11. Նախագիծը խորհրդի նիստում հաստատվելուց հետո նախագիծը մշակող ստորաբաժանումը ամփոփում է ընդունված և չընդունցված կարծիքները, այնուհետև կազմում է ամփոփ տեղեկանք տվյալ նախագծի վերաբերյալ կարծիքների ընդհանուր քանակի և ընդունված ու չընդունված կարծիքների ընդհանուր քանակների վերաբերյալ՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելով Հասարակայնության հետ կապերի ծառայությանը:

12. Հասարակայնության հետ կապերի ծառայությունը՝ յուրաքանչյուր Նախագծի համար, սույն կարգի 11-րդ կետի համաձայն ներկայացրած ամփոփ տեղեկանքները հավաքագրում է, և սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա պարբերականությամբ դրանց տեղեկատվության հիման վրա յուրաքանչյուր եռամսյա ժամանակաշրջանի ավարտին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի «Նախագծեր» բաժնի աղյուսակ 2-ում հրապարակում է հակիրճ վիճակագրական տեղեկատվություն՝ նշելով տվյալ եռամսյակի ընթացքում խորհրդի նիստում հաստատված Նախագծերի, ստացված և ընդունված կարծիքների ընդհանուր քանակները:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ինտերնետային կայքի «Նախագծեր» բաժնի նոր բովանդակությունը

«Հարգելի ընթերցող

Կենտրոնական բանկի կայքի այս բաժնում պարբերաբար տեղադրվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի նախագծերը: Կարևորելով հետաքրքրվող կառույցների և անհատների հնարավորինս լայն մասնակցությունը Կենտրոնական բանկի նախաձեռնություններին՝ ակնկալում ենք ներկայացվող փաստաթղթերի վերաբերյալ ստանալ Ձեր կարծիքները:

Կենտրոնական բանկը տեղեկացնում է նաև, որ մեր ցանկացած ՆՈՐ որոշման նախագծի վերաբերյալ Ձեր կարծիքները կարող եք ներկայացնել աղյուսակում նշված համապատասխան ժամկետներում՝ մեզ հետ կապ հաստատելով ստորև ներկայացված աղյուսակում նշված համապատասխան էլեկտրոնային փոստի հասցեներով: Էլեկտրոնային նամակներին կարող եք կցել Ձեր կարծիքները հիմնավորող այլ փաստաթղթեր:

Ստորև ներկայացված աղյուսակի «Կարծիքների ընդունման ժամկետի ավարտ» սյունակում նշված ամսաթվին հաջորդող 10 աշխատանքային օրերի ընթացքում Ձեր կողմից ներկայացված կարծիքները կքննարկվեն Կենտրոնական բանկում և այդ ընթացքում, ելնելով նպատակահարմարությունից, Դուք կստանաք քննարկումներին մասնակցելու իրավեր:

Աղյուսակ 1

N	Նախագծի անվանումը	Կարծիքների ընդունման ժամկետի սկիզբ	Կարծիքների ընդունման ժամկետի ավարտ	Հետադարձ կապ
1.				
2.				
3.				

Աղյուսակ 2

Եռամսյակ	Նախագծերի ընդհանուր քանակը	Ստացված կարծիքների ընդհանուր քանակը	Ընդունված կարծիքների ընդհանուր քանակը

Կենտրոնական բանկի կողմից մշակված նախագծերի և ընդունած որոշումների վերաբերյալ Ձեր կարծիքները մշտապես կարող եք ուղարկել mcba@cba.am էլեկտրոնային փոստի հասցեով:

Կենտրոնական բանկի կայքի այս բաժնում զետեղված նյութերը գտնվում են նախագծային փուլում և պաշտոնապես հրապարակված չեն: Նախագծերը, պաշտոնական հրապարակումից հետո, կտեղադրվեն Կենտրոնական բանկի կայքի Օրենքներ և Այլ իրավական ակտեր բաժիններում »